ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Վիգեն Միրզոյան

Բանալի բառեր՝ փորձաշրջանի ժամկետի սկիզբ, պարտականությունը վերացնելը, փոփոխելը կամ լրացնելը, չարամտորեն խուսափում, պարտականությունները չարամտորեն չկատարել, միջնորդություն, ՀՀ Վճռաբեկ դատարան, ՀՀ Սահմանադրական դատարան:

Մարդասիրության սկզբունքին համապատասխան՝ քրեական օրենսդրությունն ապահովում է մարդու անվտանգությունը, իսկ պատիժը չի կարող ֆիզիկական ցավ ու մարդկային արժանապատվությունը նվաստացնելու նպատակ հետապնդել[1]: Քրեական իրավունքում մարդասիրության սկզբունքի դրսևորումներից մեկն է պատժից ազատելու ինստիտուտի նախատեսումը: Պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ որպես պատժից ազատելու յուրօրինակ եղանակ, հնարավորություն է ստեղծում քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ պատժատեսակների դատապարտված անձանց պատժի կրումը օրենքով սահմանված ժամկետով հետաձգելու համար: Ընդ որում՝ պատժի կրումը հետաձգվում է որոշակի պայմաններով, որոնց չպահպանումը կարող է /իսկ որոշ դեպքերում նաև պարտադիր կարգով/ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու առիթ հանդիսանալ: Եվ հակառակը՝ հետաձգված ժամկետում օրենքով սահմանված պայմանների պահպանումն անձին ազատում է ոչ միայն դատավճռով նշանակված պատիժը կրելուց, այլ նաև վերացնում է նրա հանցագործության քրեիրավական հետևանք հանդիսացող դատվածությունը:

Արցախի Հանրապետության քրեական օրենսգրքի /այսուհետ՝ քրեական օրենսգրք/ 69-րդ /ՀՀ քր. օր-ի 70-րդ/ հոդվածի համաձայն.

«1. Եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

3. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ մեկից հինգ տարի ժամկետով:

4. Ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելիս կարող են նշանակվել լրացուցիչ պատիժներ, բացի գույքի բռնագրավումից:

5. Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը դատապարտյալի վրա կարող է դնել որոշակի պարտականություններ՝ փոխել մշտական բնակության վայրը, բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ

---

* Հոդվածն ընդունվել 16.02.18

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ իրավագիտության ամբիոնը:

վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք:

6. Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, ինչպես նաև անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը:

7. Փորձաշրջանի ընթացքում անձի կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժ նշանակում սույն օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում նաև նոր անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում, եթե դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը»: [2]

Վերոգրյալ քրեաիրավական նորմերի մի մասը Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի <u>օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:</u> Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև <u>հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա</u>՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԱԴ/0034/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԷԴ/0132/01/13, ԵԱՆԴ/0060/01/13, ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՍԴ/0204/01/13, ՏԴ/0031/01/14, ՍԴ3/0174/01/14, ԵԱԴԴ/0011/01/14, ԵԱՔԴ/0091/01/14, ԵԿԴ/0039/01/15 որոշումներ):

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքներից <u>հանցավորի անձը բնութագրող տվյալների</u> վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել թիվ ՎԲ-50/07, թիվ ԵԿԴ/0042/01/11, թիվ ՍԴ/0109/01/12, թիվ ԱԿԴ/0082/01/12, թիվ ԵԱՔԴ/0091/01/14 և այլ որոշումներում:

Մասնավորապես՝ Հ. Հարությունյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող <u>նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեա-իրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ</u>

գնահատումը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն)» (տե՛ս Հազարապետ Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը):

Հ. Հարությունյանի գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները Վճռաբեկ դատարանը զարգացրել է Ս. Սարգսյանի գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. ,(...) «Հանցավորի անձնավորություն» եզրույթն ի տարբերություն «հանցագործության սուբյեկտ» եզրույթի, ավելի ընդարձակ է, և օժտված է սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերով: (...)

(...) Պատժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պատժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջի առկայությամբ» (տե՛ս Սերոբ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12 որոշման 36-37-րդ կետերը):

Իսկ Ս. Աղախանյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է. ,(...) «Յուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների (...), պետք է բազմակողմանի վերլուծության ու գնահատման ենթարկի հանցավորի անձը: (...) Պատասխանատվության և պատժի անհատականացման և հետևաբար նաև նշանակված պատժի կրման հարցի լուծման համար էական նշանակություն ունեն հանցավորի անձի ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան, այլև սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ փաստական տվյալները: Հետևաբար, հանցավորի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս և նշանակված պատիժը փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է ուսումնասիրի հանցավորի ընտանեկան դրության, նրա խնամքին այլ անձանց առկայության, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները:

(...) «Անձի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, թե նշանակված պատիժն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա» (տե՛ս Սեյրան Աղախանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշման 19-րդ կետը)[3]:

ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումները և քրեական օրենսգրքի մեկնաբանությունները, Արցախի Հանրապետության իրավապահ մարմինների համար դոկտրինալ լինելով հանդերձ, իրավակիրառ պրակտիկայում ընդունվում են որպես պարտադիր և ուղղորդող նշանակություն ունեն օրենքի միատեսակ կիրառման համար: Սակայն պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված օրենսդրական որոշ կարգավորումներ իրենց անորոշության և համապատասխան մեկնաբանության բացակայության պատճառով դժվարություններ են առաջացնում պրակտիկ աշխատողների համար:

Մասնավորապես՝ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարա-

նի դիսպոզիտիվ /հայեցողական/ իրավունքն այն մասին, որ վերջինս դատապարտյալի վրա կարող է դնել հետևյալ պարտականությունները՝

1. չփոխել մշտական բնակության վայրը,

2. բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից,

3. նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին:

*Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ **առանց դրա**, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք:*

Վերոգրյալ նորմի համակողմանի վերլուծությունը գործնականում կարող է առաջացնել մի շարք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝

- *քր. օր-ի 69-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված բոլոր պարտականությունները կարող են դրվել միաժամանակ, թե՞ առանձին-առանձին,*
- *ի՞նչ պետք է հասկանալ մշտական բնակության վայր ասելով,*
- *դատարանը կարող է փոխարինել միայն դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա դրված նրա ուղղմանը նպաստող «**այլ**» պարտականությունները, թե՞ իրավասու է փոխարինելու նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված պարտականությունները նույնպես,*
- *դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը իրավասու է արդյոք միջնորդելու 69-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանված պարտականությունները փոխարինելու համար, թե ոչ:*

Քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասության բովանդակությունից դիտվում է, որ դատապարտյալի վրա դրվող պարտականությունները իրարից բաժանված են ստորակետներով: Իսկ Իրավական ակտերի մասին ԱՀ օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ կետի համաձայն. «Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետներով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է»: Այստեղ կարող է տրամաբանական հարց ծագել, թե արդյո՞ք այդ պարտականությունները համարվում են 69-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված նորմի կիրառման միաժամանակյա անհրաժեշտ պայմաններ, թե ոչ: Եթե դա լինի այդպես, ապա դատարանը, պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս, օգտվելով իր դիսպոզիտիվ իրավունքից և ցանկանալով դատապարտյալի վրա դնել որոշակի պարտականություններ, պարտավորված կլիներ նշանակել վերոնշյալ նորմով սահմանված բոլոր պարտականությունները, ինչն ինքնին անհեթեթություն է: Տվյալ դեպքում ԱՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանված նորմի կիրառումը պայմանավորված չէ ստորակետներով բաժանված միաժամանակյա դերակատարություն ունեցող և իրավակարգավորման նպատակի իրացումը երաշխավորող պայմաններից, ուստի դատարանը կարող է ամբաստանյալի վրա դնել հիշյալ նորմով սահմանված պարտականություններից որևէ մեկը: [4]

Բնակության վայրի** հասկացությունը սահմանված է ԱՀ քաղաքացիական օրենսգրքի 23-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն. «Բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է.» Օրենսդրական վերոգրյալ ձևակերպումից անհասկանալի է, թե ի՞նչ է նշանակում **մշտա-

***կան** բնակության վայր, արդյոք ժամանակավորապես այլ վայր մեկնելը, կարող է գնահատվել որպես «մշտական» բնակության վայրի **փոխում**, թե ոչ: Կարծում ենք այստեղ առկա է իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանող դրույթ, քանի որ չկա իրավական հստակ կարգավորում **մշտական բնակության վայր** եզրույթի հասկացության վերաբերյալ: Եթե քաղաքացու բնակության վայր է համարվում նրա մշտապես ապրելու վայրը, ապա առնվազն կրկնողություն ու անորոշություն է ևս մեկ անգամ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասում «բնակության վայր» արտահայտությունից առաջ «մշտական» բառն օգտագործելը: Կարծում ենք այն օրենսդրական փոփոխության միջոցով պետք է հանվի քննարկվող նորմից: Այս հանգամանքն առաջացնում է նաև գործնական մեծ խոչընդոտ հատկապես այն դեպքերում, երբ դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում **չարամտորեն** խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց: Իրավիճակը բարդանում է նաև այն պատճառով, որ օրենսդիրը չի բացահայտում, թե որն է համարվում դատապարտյալի վրա դրված պարտականությունները կատարելուց **չարամտորեն խուսափում**: Կոնկրետ դեպքում անորոշ է, թե ինչպես է դրսևորվում դատապարտյալի կողմից մշտական բնակության վայրը չփոխելու պարտականությունը կատարելուց չարամտորեն խուսափումը:*

*Իրավական ակտերի մասին ԱՀ օրենքի 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.«Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:» Ինչպես դիտվում է քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ նախադասության բովանդակությունից դատարանը կարող է, ոչ միայն **սեփական նախաձեռնությամբ**, այլ նաև դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատապարտյալի վրա դնել նրա ուղղմանը նպաստող **այլ պարտականություններ** կամ **փոխարինել դրանք**: Ակնհայտ է, որ քրեական օրենսգրքի վերոնշյալ նորմի տառացի մեկնաբանման արդյունքում պետք է հանգենք այն եզրակացության, որ դատարանը կարող է փոխարինել միայն 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «այլ» պարտականությունները և դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը իրավասու չէ օրինակ փորձաշրջանի ընթացքում վեներական հիվանդությունից բուժված դատապարտյալի վրա դրված համապատասխան պարտականությունը փոխարինելու միջնորդությամբ դիմել դատարան: Ավելին՝ դատարանը նույնպես իրավասու չէ փոխարինելու քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանված պարտականությունները, ինչն իմաստազրկում է պատիժը պայմանականորեն չկիրառելու արդյունքում սահմանված փորձաշրջանը, քանի որ վերոնշյալ դեպքում անիմաստ է վեներական հիվանդությունից բուժված դատապարտյալի բուժման կուրս անցնելու պարտականության կատարումը: Գործող իրավակարգավորման պայմաններում անհասկանալի է նաև, թե դատարանը ինչպես կարող է առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդության կամ սեփական նախաձեռնությամբ փոխարինել դատապարտյալի վրա դրված պարտականությունները:*

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը դատապարտյալի վրա պետք է դնի այնպիսի պարտականություններ, որոնք նա ի վիճակի կլինի կատարելու [5]: Օրինակ՝ չի կարելի սոցիալապես անապահով ու եկամտի որևէ աղբյուր չունեցող

անձին պարտավորեցնել մի քանի օրում վերականգնել հանցագործությամբ պատճառված վնասը:

Գործնական աշխատանքում որոշակի դժվարություններ են առաջանում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծելիս: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացվում է ինչպես պարտադիր, այնպես էլ ոչ պարտադիր հիմքերով: Պատիժը պայմանականորեն չկիրառման վերացման ոչ պարտադիր հիմքերն են՝

1. դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց,

2. դատապարտյալը՝ փորձաշրջանի ընթացքում անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք է կատարում:

Իսկ պատիժը պայմանականորեն չկիրառման վերացման պարտադիր հիմք է փորձաշրջանի ընթացքում անձի կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք կատարելը:

Քրեական օրենսգիրքը չի սահմանում փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու հասկացությունը, ինչն անշուշտ անհնարին է դարձնում նշված նորմի կիրառումը:

Պատիժը պայմանականորեն չկիրառման վերացման առանձին հիմքեր են նախատեսված Արցախի Հանրապետությունում գործողության մեջ դրված ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածում: Համաձայն նշված հոդվածի.

«1. Եթե պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձը խուսափում է դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ թույլ է տալիս իրավախախտում, որի համար նրա նկատմամբ վարչական, իսկ զինծառայողի նկատմամբ կարգապահական տույժ է կիրառվում, ապա նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը գրավոր նախազգուշացնում է նրան՝ պատժի պայմանականորեն չկիրառելը վերացնելու հնարավորության մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում անձի կողմից դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարելու կամ վերահսկողությունից խուսափելու դեպքերում նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին:

3. Պարտականությունները պարբերաբար չկատարել է համարվում անձի կողմից մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ արգելված գործողությունների կատարումը կամ պարտականությունների չկատարումը կամ իր վրա դատարանի դրած պարտականությունները երեսուն օրից ավելի չկատարելը:

4. Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձը վերահսկողությունից խուսափող է համարվում, եթե նրա գտնվելու վայրը չի բացահայտվում 30 օրվա ընթացքում»:

Վերոգրյալ իրավական նորմերի բովանդակությունից դիտվում է, որ Քրեակատարողական օրենսգիրքը, նախատեսում է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու ինքնուրույն հիմքեր, որոնք նախատեսված չեն քրեական օրենսգրքում: Դրանք են՝

1. պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում անձի կողմից դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները պարբերաբար չկատարելը,

2. պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում անձի կողմից վերահսկողությունից խուսափելը:

*Քրեակատարողական օրենսգիրքը ևս չի սահմանում պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում անձի կողմից դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները չարամիտ չկատարելու հասկացությունը: Չնայած քրեական օրենսգիրքի 69-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված է **«պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափում»** իսկ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասում՝ **«պարտականությունները չարամտորեն չկատարում»** եզրույթները, այնուամենայնիվ նրանք ունեն լեզվաբացատրական նույն իմաստը:*

Վերոգրյալ նորմերի վերլուծությունն առաջացնում է հետևյալ գործնական հարցերը ևս՝

- *հիմնավո՞ր է արդյոք պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելը քրեական օրենսգրքով չնախատեսված հիմքերով, թե՞ ոչ,*
- *առկա է արդյոք մրցակցություն քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 6-7-րդ հոդվածների և քրեակատարողական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմերի միջև, թե՞ դրանք կարող են գործել առանձին-առանձին:*

*Քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են **միայն** քրեական օրենսգրքով»: Դա նշանակում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հիմքերն ու հետևանքները պարտադիր պետք է նախատեսված լինեն քրեական օրենսգրքով: Չնայած քրեակատարողական օրենսգիրքը նախատեսում է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու ինքնուրույն հիմքեր, սակայն դրանք նշված օրենսգրքերի խնդիրների տարբերությամբ պայմանավորված չեն կարող կիրառվել: Որպես լավագույն ու միակ լուծում քրեական օրենսգրքի 69-րդ և քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածներում համապատասխան փոփոխություններ կատարելն է:*

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև պատիժը պայմանականորեն չկիրառելիս սահմանված փորձաշրջանի ժամկետի սկիզբը որոշելու հարցը: Եթե ընդունենք, որ այդ ժամկետը պետք է սկսի հոսել դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից, ապա դատավճռի հրապարակումից հետո դատապարտյալի գտնվելու վայրն անհայտ լինելու, օրինակ, արտասահման մեկնելու դեպքում առաջանում են հետևյալ խնդիրները.

1. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինը զրկվում է վերջինիս հաշվառման վերցնելու, վերահսկողությունից խուսափելու համար անցանկալի հետևանքների մասին նախազգուշացնելու և առհասարակ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից.

*2. Դատապարտյալի վարքագծի նկատմամամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինը զրկվում է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու միջնորդությամբ դատարան դիմելու հնարավորությունից, քանի ԱՀ քրեական դատավարության օրենսգրքի 453-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դատական որոշման հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատական նիստում՝ **դատապարտյալի մասնակցությամբ»**:*

3. Ներկա իրավակարգավորման պայմաններում չկա պատիժը պայմանականորեն չկիրառելիս սահմանված փորձաշրջանի ժամկետի կասեցման կամ ընդհատման հնարավորություն, ինչի արդյունքում վերահսկողությունից փաստացի խուսափող /արտասահմանում գտնվող/ դատապարտյալը փորձաշրջանի սահմանված ժամկետը լրանալուց հետո ԱՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի հիմքով կհամարվի դատվածություն չունեցող անձ:

*4. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինը զրկվում է դատապարտյալի նկատմամբ հետախուզում հայտարարելու միջնորդությամբ դատարան դիմելու հնարավորությունից քանի որ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասի ուժով դատարանն իրավունք ունի հայտարարելու հետախուզում միայն **պատժի** կրումից խուսափող դատապարտյալի նկատմամբ, իսկ վերահսկողությունից խուսափելը պատժից խուսափել չէ:*

*Այս կապակցությամբ Վ.Մ.Լեբեդևն առաջարկում է փորձաշրջանի ժամկետի սկիզբ համարել դատավճռի հրապարակման պահը [6]: Տվյալ դեպքում առաջանում է մեկ այլ խնդիր ևս՝ փորձաշրջանի ժամկետն սկսում է հոսել օրինական ուժի մեջ չմտած դատավճռի պայմաններում: Բացի այդ՝ քրեակատարողական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Փորձաշրջանը հաշվարկվում է դատապարտյալին ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումում, իսկ զինծառայողին հրամանատարության կողմից **հաշվառման վերցնելու պահից**»: Իսկ քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.«Օրինական ուժի մեջ մտած դատական որոշումը կատարման է հանձնվում որոշումը կայացրած դատարանի կողմից ոչ ուշ քան այն **ուժի մեջ մտնելուց** կամ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանից գործը վերադարձվելուց 3 օր հետո:» Դրանից հետո միայն, երբ դատապարտյալը ներկայանում է իր վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականցնելու իրավասություն ունեցող մարմին՝ վերջինս վերցնում է նրան հաշվառման: Ներկա դրությամբ չկա որևէ նորմ, որը կպարտադրեր ամբաստանյալին մինչև պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը ներկայանալ իր վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին՝ նրան հաշվառման վերցնելու համար:*

Ամփոփելով և վերլուծելով վերոգրյալները՝ առաջարկվում է քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ պարբերությամբ.

Փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծից ելնելով՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ դատավճռով նրա նկատմամբ սահմանված պարտականությունները վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասը անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի կողմից դատարանի դատավճռով կամ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի որոշմամբ իր վրա դրված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարելու՝ վերահսկողությունից խուսափելու դեպքերում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերակսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին: Անձը վերահսկողությունից խուսափող է համարվում նաև նրա վար-

քաղաքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից գրավոր նախազգուշացվելուց հետո դատարանի դատավճռով կամ վերահսկող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով նրա վրա դրված պարտականությունները կատարելուց կրկին խուսափելու դեպքում»:

Իրավական որոշակիության սկզբունքն ապահովելու նպատակով առաջարկվում է նաև քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը դատապարտյալի վրա կարող է դնել որոշակի պարտականություններ՝ առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի թույլտվության չփոխել բնակության վայրը, բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ:

Փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծից ելնելով՝ դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ կարող է վերացնել, փոփոխել կամ լրացնել նրա նկատմամբ սահմանված պարտականությունները:

6. Դատապարտյալի կողմից փորձաշրջանի ընթացքում դատարանի դատավճռով կամ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի օրենքով սահմանված կարգով և դեպքերում ընդունված որոշմամբ իր վրա դրված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարելու՝ վերահսկողությունից խուսափելու դեպքերում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, ինչպես նաև անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը»:

Կարծում ենք՝ քրեական օրենսգրքի կարևոր բաց է նաև փորձաշրջանի ժամկետի կրճատման հնարավորության չնախատեսումը այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր սահմանված փորձաշրջանի առնվազն կես ժամկետի ընթացքում դրսևորել է անբասիր և օրինահարգ վարքագիծ: Ուստի առաջարկում ենք քրեական օրենսգրքում նախատեսել նաև նման հնարավորություն: Մասնավորապես քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում առկա. «1/պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանն անցնելուց հետո» նախադասության մեջ ***«անցնելուց»*** *բառից հետո անհրաժեշտ է ավելացնել* ***«կամ վերացնելուց»*** *բառերը, իսկ նույն հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ նոր պարբերությամբ.* ***«Եթե անձը փորձաշրջանի ընթացքում դրսևորել է անբասիր վարքագիծ, ապա նրա խնդրանքով դատարանը կարող է վերացնել փորձաշրջանը, բայց ոչ շուտ քան փորձաշրջանի ժամկետի կեսը լրանալը»:***

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Рарог А.И. Настольная книга судьи по уголовным делам, М., 2007, стр. 122.
2. Արցախի Հանրապետության քրեական օրենսգիրք, 2013.
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2016թ. մարտի 30-ի թիվ ԱՐԴ/0031/01/15 որոշումը:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2016 թվականի փետրվարի 2-ի որոշումը:
5. Овчинникова Н.А. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Общая часть, М., 2007, стр.153.
6. Лебедев В.М. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Общая часть, М., 2005, стр. 216.

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Պատիժը պայմանականորեն չկիրառելու արդի խնդիրները
Վիգեն Միրզոյան

Հոդվածում ներկայացվել և վերլուծվել են պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված մի շարք գործնական խնդիրներ և դրանց լուծմանն ուղղված տեսական մոտեցումներ: Խնդիրների թվին են դասվում, մասնավորապես, դատապարտյալի կողմից իր վրա դրված որոշակի պարտականությունները չկատարելու հետևանքով առաջացող հարցերը և ԱՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերով վերոգրյալ խնդիրների լուծմանն ուղղված նորմատիվային հակասությունները:

РЕЗЮМЕ
Текущие проблемы условного неприменения наказания
Виген Мирзоян

Ключевые слова: *начало испытательного срока, отмена, поправка, или дополнение обязанностей, злостное отклонение, злостное невыполнение обязанностей, ходатайство, Кассационный суд РА, Конституционный суд РА.*

В статье представлены и проанализированы ряд практических проблем, связанных с условным неприменением наказания, и теоретические подходы решения этих проблем. К данным проблемам, в частности, относятся вопросы связанные с невыполнением осужденным возложенных на него определенных обязанностей и нормативные противоречия в решении вышеуказанных проблем между уголовным и уголовным исправительным кодексами Республики Арцах.

SUMMARY
Current problems of conditional disuse of punishment.
Vigen Mirzoyan

Keywords: *the beginning of the trail term, cancellation, correction, or duty addition, wicked avoidance, wicked duty doing failure, solicitation, Court of cassation of the Republic of Armenia, Constitutional court of the Republic of Armenia*

A number of practical problems connected with the conditional disuse of punishment and some theoretical ways of solving these problems are introduced and analysed in the article.To these problems are particularly related questions connected with the failure of the defendant's doing his or her duty and the normative contradictions of the solution of the above mentioned problems between the criminal and the criminal reformatory codes of the Artsakh Republic.